Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՔՍԱՆԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(7 դեկտեմբերի 2008 թ.)

Մեծարգո Նախագահ Հայաստանի Հանրապետության՝ Տիար Սերժ Սարգսյան,

Սիրելի աստվածասեր, բարեպաշտ ժողովուրդ

Լրացավ 20-րդ տարելիցը 1988 թ. երկրաշարժի, որը մեծ ավերածություններ պատճառեց մեր երկրին, մեծ կորուստներ և վիշտ՝ մեր ժողովրդին: Այսօր աղոթքով ոգեկոչում ենք հիշատակը աղետի հազարավոր զոհերի:

Այս օրերին ցավի զգացումով ապրեցինք վերհուշը տարերային աղետի կործանարար հետևանքների: Մեր առջև հառնեցին համատարած փլուզումների պատկերները, մարդկանց վշտահար ու տանջահար դեմքերը, բայց նաև՝ Հայաստանից և աշխարհի տարբեր կողմերից օգնության շտապող գթասիրտ մարդկանց անհատնում հոսքը, ավտոմեքենաների անվերջ շարասյուները, որ մխիթարություն, քաջալերանք ու լավատեսություն էին բերում: Արդարև, սիրելիներ, այդ դժնդակ օրերին զորացյալ հույսով ապրեց, հավատով գործեց, սիրով համախմբվեց մեր ժողովուրդը՝ ամոքելու վիշտը, վերացնելու երկրաշարժի աղետալի հետևանքները:

Ծանր ու դժվարին եղան նաև երկրաշարժին հաջորդած տարիները: Արցախը մարտնչում էր ազատ կյանքի համար, և Հայաստանն ու Արցախը հայտնվել էին անօրինական շրջափակման մեջ: Երկրաշարժից վիրավոր, մթության ու ցրտի, սովի ու կարիքի մեջ անգամ իր արդար դատի պաշտպանությունից չնահանջեց մեր ժողովուրդը: Այդ օրերին Հայրենիքում և Սփյուռքում մեկ և նույն մտքով էր ապրում ազգս հայոց՝ վերացնել աղետի պատճառած ավերածությունները, հաղթահարել տնտեսական կյանքի ճգնաժամը, շրջափակման դժվարությունները, պաշտպանել Արցախը: Աստծո պարգևած զորությամբ, միասնական ուժերով մեր ժողովուրդը ձեռնամուխ եղավ ծառացող հրամայականների դիմագրավմանը, Հայաստանում և Արցախում հայրենի պետականության վերականգնմանը և իր ազատ կյանքի կառուցմանը: Այսօր մենք հիշում ենք 20 տարիների հերոսական պատմությունը մեր ժողովրդի, զոհողությունների ու նվիրումի պատմությունը, պայքարի և կառուցումի պատմությունը: Այդպիսին պիտի մնան ու հիշվեն այդ տարիները, պիտի հիշվեն մարդիկ իրենց գործերով, պիտի փառաբանվի Աստված, որ «տվեց մեզ հավիտենական մխիթարություն և բարի հույս իբրև շնորհ» (Բ Թեսաղ. Բ 15) և օրհնեց մեր ժողովրդի ջանքերը և արդար հույսերը:

Երկրաշարժից հետո հսկայածավալ աշխատանք է կատարվել, ահռելի ջանք ու միջոց ներդրվել: Այսօր աննվազ են հայրենի կառավարության, մեր ժողովրդի ջանքերը՝ ամբողջովին վերացնելու երկրաշարժի հետևանքները, վերակառուցումներով, բարելավվող կյանքով լուսավորելու և պայծառացնելու մեր երկիրը՝ համայն հայության Հայրենիքը: Արդարև, աշխարհասփյուռ հայության միասնական ջանքերով, հա-

վատով ու նվիրումով ձեռք բերված հաջողություններն ու հաղթանակները այս տարիների ընթացքում մեծ տեղաշարժեր ու փոփոխություններ են բերել, բայց չի փոխվել ու Աստծո ողորմությամբ չի փոխվելու մեր ժողովրդի հավատարմությունը ինքն իրեն՝ Քրիստոսասեր իր ազատ, արարող, արդարասեր հոգուն:

Սիրելինե՛ր, այսօր հանուն աշխարհասփյուռ մեր ողջ ժողովրդի, Մենք վերստին Մեր երախտագիտությունն ենք հայտնում այն աջակցության համար, որ ցուցաբերեցին բազմաթիվ երկրներ ու ժողովուրդներ, կազմակերպություններ և անհատներ՝ Հայաստան առաքելով բազմապիսի օգնություն և կիսելով մեր ժողովրդի վիշտը: Այդ աջակցությունն ու սատարումը արտահայտությունը եղան եղբայրսիրության, արտահայտությունը եղան մարդկության կամքի՝ ընթանալու դեպի բարօր, խաղաղ ու ապահով աշխարհ:

Առ Բարձրյալն աղոթքով Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում մեր ժողովրդի զավակներին, ովքեր տարիներ շարունակ ջանք ու միջոց են ներդրել վերացնելու համար երկրաշարժի ավերածությունները, վերականգնելու աղետյալ բնակավայրերը: Մեր գնահատանքը, սերն ու օրհնությունը՝ աղետի գոտու մեր հարազատ բոլոր զավակներին, որ համբերեցին ու դիմացան նեղություններին և վերստին կառուցեցին իրենց տները, քաղաքներն ու գյուղերը ու զավակներ մեծացրեցին՝ հույսով ու հավատով:

Մեր հույսերի, մեր տեսիլքների իրագործման մեծ ճանապարհ ունենք անցնելու, և ինչպես հայացքը ընդգրկում է հորիզոնը, ինչպես երազը պատկերում է նպատակը, այս հստակատեսությամբ ու լավատեսությամբ, առ Աստված ապավինությամբ պիտի ընթանանք դեպի մեր Հայրենիքի բարեշեն ու բարեհույս ապագան, դեպի բարօր և միասնական կյանքը համայն մեր ժողովրդի:

Խոնարհումով երկրաշարժի զոհերի հիշատակի առջև աղոթք բարձրացնենք երկինք նրանց հոգիների համար և հայցենք Բարձրյալի խաղաղությունը, շնորհն ու օրհնությունը համայն աշխարհին, մեր Հայրենիքին և մեր կյանքին: Եվ Աստված, որ «տվեց մեզ հավիտենական մխիթարություն և բարի հույս՝ իբրև շնորհ, թող հաստատ պահի ձեր սրտերը ամեն բարի խոսքի և գործի մեջ»: Եվ թող «Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սերը և Սուրբ Հոգու հաղորդությունը ձեզ հետ լինեն». Ամեն: